ԿԱՐԾԻՔ

Ելենա Հովհաննեսի Էթարյանի

«Գրականության ինքնառեֆլեքսիան գերմանական գրականության ռոմանտիզմի դարաշրջանից մինչ արդի գրականություն (Թոմաս Մանի և Գյունթեր Գրասի ստեղծագործությունների հիման վրա)» ատենախոսության մասին

Ելենա Էթարյանի դոկտորական ատենախոսությունը նվիրված է գերմանական գրականության կարևորագույն հարցերից մեկին՝ գրականության ինքնառեֆլեքսիային, այլ խոսքերով՝ գրականության ինքնագիտակցության և ինքնաճանաչողության խնդիրներին, ժամանակի մեջ նրա ներքին զարգացումներին տարբեր դարաշրջաններում (19-րդ դարասկիզբ և մինչև 20-րդ դարի վերջ), նրա դրսևորման ձևերին, եղանակներին, աշխարհայացքային և գեղագիտական տարաբնույթ պրոբլեմներին: Ատենախոսության առարկան են Թոմաս Մանի և Գյունթեր Գրասի երկերը, որոնցում թերևս ավելի ակնառու է արձանագրված գրականության ինքնառեֆլեքսիան՝ նկատի ունենալով 20-րդ դարի արևմտյան գրականությանը հատուկ (առանձնապես գերմանական գրականությունը բնորոշող) ինքնագիտակցության, ինքնաճանաչողության, ինքնարտահայտման ձգտումը, որը նրան հաղորդում է փիլիսոփայական առանձնահատուկ նկարագիր: Ուսումնասիրության հիմնական հարցերից են, թե «ինչպես են փոխառնչվում բանականությունն ու բանաստեղծական երևակայությունը, հորինվածքն ու իրականությունը» (էջ 269): Այս տեսանկյունից 20-րդ դարի գերմանացի երկու ակնառու գրողների ստեղծագործական ընդհանուր փիլիսոփայական հիմքը ցույց տալու համար հեղինակը անհրաժեշտաբար անդրադառնում է այն հսկայական գրական-փիլիսոփայական մտքին, որը՝ լայն առումով բնորոշ է հատկապես 18-րդ դարի 2-րդ կեսի և 19-20-րդ դարերի գերմանական մշակույթին:

Ելնելով վերոնշված նպատակից՝ Ելենա Էթարյանը իր աշխատանքի **առաջին գլխում՝** «**ԳՐԱԿԱՆՈՒԹԱՆ ԻՆՔՆԱՌԵՖԼԵՔՍԻԱՆ ԵՎ ՆՐԱ ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԴԳՐԿՈՒՅԹԸ**» մանրամասն քննում է ռոմանտիզմի գրական-փիլիսոփայական միտքը (Ֆ. Շլեգել, Նովալիս, Է.Թ"Ա" Հոֆման, Հ. Քլայստ)՝ ուսումնասիրված Թոմաս

Մանի և Գյունթեր Գրասի ստեղծագործական առնչությունների տեսակետից: Աշխատանքի մեջ վարպետորեն ներկայացված և վերլուծված է Ֆրիդրիխ Շլեգելի «ունիվերսալ պոեզիայի» տեսությունը և ռոմանտիկական հեգնանքի գաղափարը, որը հանդիսացավ ռոմանտիզմի՝ որպես գեղարվեստական մեթոդի անկյունաքար: Ատենախոսը հանգում է այն եզրակացության, որ ռոմանտիզմի գրականության շրջանակներում արդեն իսկ նշմարվում են և որպես պահանջ են ներկայացվում ժամանակակից գրականությանը բնորոշ ինքնառեֆլեքսիայի կամ ինքնահղվածության միտումները: Է"Թ"Ա"Հոֆմանի «Ոսկե կճուճ» հեքիաթի հիման վրա ի ցույց է դրվում ռոմանտիկական հեգնանքի և «ունիվերսալ պոեզիայի» տեսության գործնական իրագործումը: Այս հեղինակի ընտրությունը պայմանավորված է նաև վերջինիս և Գրասի բանարվեստների միջև ընդհանրություններով: Առաջին գլխի եզրափակիչ մասերում քննվում են ռոմանտիզմի՝ ինքնառեֆլեքսիայի գեղարվեստական մեթոդի ազեցությունները Թ. Մանի և Գ. Գրասի երկերի վրա:

Երկրորդ գլխում՝ «ԱՐՎԵՍՏԻ ԻՆՔՆԱՌԵՖԼԵՔՍԻԱՆ ՈՒ ԻՆՔՆԱԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՄՈԴԵՌՆԻԶՄԻ ԵՎ ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻԶՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ՝ ԸՍՏ ԹՈՄԱՍ ՄԱՆԻ ԵՎ ԳՅՈՒՆԹԵՐ ԳՐԱՍԻ ԵՐԿԵՐԻ» ուսումնասիրվում են մոդեռնիզմի հայեցակարգը և ակունքները: Այստեղ հատուկ տեղ է զբաղեցնում Ֆրիդրիխ Շիլլերի գեղագիտական տեսությունը, որի գլխավոր նպատակը՝ ժամանակակից հասարակության մեջ արվեստի դերի լուսաբանումն է: Այն նաև, ինչպես հայտնի է, ընկած է մոդեռնիզմի գեղագիտական խոսույթի հիմքում: **«ՖՐԻԴՐԻԽ ՆԻՑՇԵՆ՝ ՈՐՊԵՍ ՄՈԴԵՌՆԻԶՄԻ ԱՄԵՆԱՎԱՌ ՓԻԼԻՍՈՓԱՆ, ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ԹՈՄԱՍ ՄԱՆԻ ԲԱՆԱՐՎԵՍՏՈՒՄ»** ենթագլուխը լուսաբանում է վերջինիս առանցքային դերը Թոմաս Մանի բանարվեստի և ստեղծագործության համատեքստում: Երկրորդ գլխի կենտրոնական հատվածներից մեկում, որը կրում է **«ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՆՔՆԱՌԵՖԼԵՔՍԻԱ»** վերնագիրը, գրականության և սեփական ստեղծագործական գործընթացի ինքնառեֆլեսիան ներկայացվում են որպես մոդեռնիզմի բնութագրիչներից և դիտվում են որպես ժամանակի մարտահրավեր:

Այս գլուխում առանձնապես հետաքրքիր են պարոդիայի (ծաղրանմանակման) և հեգնանքի (իրոնիայի) հարցերին նվիրված հատվածները, որոնք կազմում են աշխատանքի էական մասերը (պարզ է՝ պարոդիան անմիջականորեն կապված է գրական ուղղությունների հետ ոչ միայն երգիծական, այլև ճանաչողության առումով, իսկ իրոնիան՝ 19-րդ դարի 1-ին կեսի գերմանական գրական-փիլիսոփայական մտքի կարևորագույն կատեգորիաներից էր): Երկորդ գլուխը եզրափակող ենթագլուխները նվիրված են Թոմաս Մանի և Գյունթեր Գրասի՝ արվեստի և արվեստագետի գործառույթների պատկերմանը ժամանակակից գրականության համատեքստում: Այս նպատակով ատենախոսը քննում է գրողների այն երկերը, որոնցում արծարծվում են սույն ուսումնասիրության առանցքային խնդիրները:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «**ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՌԵՖ-ԼԵՔՍԻԱՆ «ԴՈԿՏՈՐ ՖԱՈՒՍՏՈՒՍ» ԵՎ «ԱՆԵԶՐ ԴԱՇՏ» ՎԵՊԵՐՈՒՄ**» տրոհվում է երկու ծավալուն ենթագլուխների, մասնավորապես «Դոկտոր Ֆաուստուս» և «Անեզր դաշտ» վեպերի քննության, ընդ որում գրականության ինքնառեֆլեքսիան քննության է առնվում պատումի (***3.1.2.*** և ***3.2.2. ՊԱՏՈՒՄԻ ԻՆՔՆԱՌԵՖԼԵՔՍԻԱՆ***), լեզվի (***3.1.3.*** և ***3.2.3. ԼԵԶՎԻ ԻՆՔՆԱՌԵՖԼԵՔՍԻԱՆ)*** և երկի գեղարվեստականության (***3.1.4.*** և ***3.2.4. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԿԻ ԻՆՔՆԱՌԵՖԼԵՔՍԻԱՆ***) տեսանկյուններից: Ելենա Էթարյանը հանգում է այն եզրակացության, որ գրականության ինքնառեֆլեքսիայի բովանդակային երեք մակարդակներն ունեն մեկ ընդհանուր գիծ՝ նրանք ռեֆլեքսիայի վաղնջական մեղքի հետևանք են: Ուսումնասիրության շրջանակներում դա ներկայացվում է դրախտի մոտիվի պատմության եռաստիճան մոդելի, Ատլանտիդայի մոտիվի («Ոսկե կճուճը»), Հայնրիխ Քլայստի «Խամաճիկների թատրոնի մասին զրույցի» հիման վրա, Ֆրիդրիխ Շիլլերի՝ միամիտ (նաիվ) ու սենտիմենտալ բանաստեղծների տիպերի տարբերակման միջոցով՝ ընդհուպ մինչև «Դոկտոր Ֆաուստուս» և «Անեզր դաշտ» վեպերը: Ատենախոսը նշում է նաև, որ ինքնառեֆլեքսիայի ուսումնասիրվող մակարդակների դեպքում գործ ունենք պատմականորեն տարբեր ժամանակաշրջանների հետ:

Հաշվի առնելով նյութի անսպառ հարստությունը և բարդությունը, ուր խաչաձևվում և, ըստ էության, սկիզբ են առնում գերմանական գրականության հետագա գրեթե բոլոր գրական-գեղարվեստական ուղղություններն ու հոսանքները

(ռոմանտիզմ, էքսպրեսիոնիզմ, իմպրեսիոնիզմ և այլն), անհրաժեշտ է նշել Ելենա Էթարյանի գիտավերլուծական հմտությունը, նյութին կատարելապես տիրապետելու, երևույթների ներքին, հաճախ հազիվ նկատելի կապերը գտնելու և արժևորելու ունակությունը, որն, ըստ էության, տվյալ աշխատության «տեղեկատվական կենտրոնն» է և նպատակը:

Նորույթը՝ գրական-փիլիսոփայական այդ լայն ֆոնի վրա Թոմաս Մանի և Գյունթեր Գրասի (հատկապես վերջինի, որի մասին եղած գրականությունը չի կարող համեմատվել Թոմաս Մանի մասին գոյություն ունեցող նյութերի ծավալի հետ) մանրակրկիտ քննությունն է՝ դիտված գրական ինքնառեֆլեքսների տեսանկյունից:

Աշխատանքը, անկասկած, ավելի կշահեր, եթե առաջին և երկրոդ գլուխները ևս հագեցած լինեին ամփոփումներով, ինչպես երրորդ գլուխը, իսկ ատենախոսության ներածության մեջ խնդրի պատմությունը արծարծվեր ավելի հանգամանորեն: Շարադրանքում հանդիպում ենք նաև լեզվական առանձին ոչ էական վրիպումներ ու անհարթություններ, ինպես նաև եզրույթների ոչ միասնական գործածում. այսպես, օրինակ, մերթ կիրառվում են "միջտեքստային", մերթ՝ "ինտերտեքսային" եզրույթները: Սական վերոնշված դիտողությունները ամենևին չեն ստվերում աշխատանքի անժխտելի գիտական արժեքը:

Իբրև եզրակացություն պետք է նշեմ, որ իրոք կատարված է վիթխարի աշխատանք և՛ նյութի ընտրության, և՛ դրա գիտական հետազոտության տեսանկյունից: Ուստի ատենախոսությունը միանշանակ արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ:

Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Կարլեն Մատինյան

Ռուս-Հայկական (Սլավոնական)
Համալսարանի գիտական քարտուղար,
բան. գիտ. թեկնածու Ռոզա Կասաբաբովա